

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱԳԵՏ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆ ՊՐՈՖ. ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻԻՆ «Ս. ՍԱՀԱԿ—Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՆՈՒՆ ՓՐՈՖԵՍՈՐ ՖՐԵՏԵՐԻՔ ՖԵՅՏԻԻՆ ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՓԱՐԻԶ

Սուրբ Էջմիածնից, սխիթարուած սրտով և մեծ ուրախութեամբ ողջունում ենք Ձեր ծննդեան 75-ամեակը և գիտական մանկավարժական բազմամեայ հարուստ վաստակը, որի կարևոր մասը նուիրաբերել էք հայագիտութեանը: Այսպիսով, Դուք հանդիսանում էք հմուտ ու վաստակաշատ շարունակողը ֆրանսիացի հայագէտների շնորհակալ մեծ գործի, որոնք անցեալում այնքան նշանակալից ծառայութիւններ են մատուցել հայ ժողովրդին, բանասիրության և պատմագիտութեան ասպարէզներում:

Ձեր անձնատրութիւնը, յարգարժան փրոֆեսոր, և Ձեր գիտական մեծ վաստակը Մենք նկատում ենք ֆրանսիացի ժողովրդի նոր ընծան պարգևուած հայ ժողովրդին: Յիրաւի, տասնամեակներ շարունակ Ձեր հրատարակած գիտական մեծարժէք գործերը և ուսումնասիրութիւնները, Ձեր մանկավարժական բեղուն աշխատանքը՝ հայ դասական լեզուն ու հայ մշակոյթը նոր սերունդներին ջամբելու և ֆրանսիացի ու այլազգի գիտնականներին և մտաւորականներին ծանօթացնելու, փայլուն վկայութիւններն են հայագիտական Ձեր բազմակողմանի և ընդարձակ գործունէութեան:

Հայ ժողովուրդն ու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին երախտապարտ կը մնան Ձեզ ընդմիշտ:

Ձեր եօթանասունհինգամեայ ոսկեայ յոբելեանի առթիւ և ի բարձր գնահատումն հայ ժողովրդին Ձեր մատուցած անմոռանալի ծառայութեանց, այլ և ընդառաջելով Հայրապետական պատուիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեանի միջնորդութեանը, այսու Մեր կոնդակով Ձեզ պարգևատրում ենք «ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ԵՒ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ» շքանշանով, աղօթքով ջերմագին, որ այն կրէք Ձեր ազնիւ կրծքի վրայ արդար հպարտութեամբ երկար, շատ երկար արևոտ տարիներ, միշտ քաջառողջութեամբ ու մշտանորոգ ստեղծագործ եռանդով:

Այս երջանիկ առիթով Մեր օրհնութիւնը և ամենաբարի մաղթանքներն ենք յղում նաև Ձեր ազնուաշուք Տիկնոջը, որ Ձեր կեանքի և Ձեր անյոգնաբեկ աշխատանքի ճանապարհին հանդիսացաւ Ձեր ներշնչարանը և Ձեր հոգատար հրեշտակը:

«Ողջ լերուք կօրհնեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 10 Դեկտեմբերի
1983 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԲ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1229